ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԳՀԾՁԲ-7/1-1

ք. Երևան 18 ը հունվարի 2019թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Մ. Ղամբարյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Պատվիրատու, մի կողմից և «Լարս» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Ա. Պրազյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Կատարող, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է սննդի պատրաստման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման ընդունման արձանագրությունը (հավելված N 3)՝ Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությունը լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված հինգ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության առավելագույն գինը կազմում է՝ 40000000 (քառասուն միլիոն) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները: Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձևոք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 9 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

7.14 Սույն պայմանագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ թիկունքի վարչությունը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«Լարս» ՍՊԸ
ք. Երևան, Բագրևանդի 5	ՀՀ, ք. Երևան, Ն. Զարյան 24
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011144079	Հ/Հ 11500234795947
ՀՎՀՀ 02522157	ՀՎՀՀ 00118713
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ	տնօրեն
Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ	Ա. ՊՐԱՉՅԱՆ

Հավելված N 1
N ԳՀԾՁԲ-7/1-1 պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

2019թ. ՀՀ ՊՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀԱՎԱՔԱԿԱՅԱՆՈՒՄ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ՍՆՆԴԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

1. Սննդի պատրաստման և մատուցման ծառայություն իրականացնողը ՀՀ ՊՆ կենտրոնական հավաքակայանի ճաշարանում անձնակազմին պետք է ապահովի ոչ պակաս օրական երեքանգամյա տաք սննդով: Անձնակազմին տեղափոխման ժամանակ ճանապարհին պետք է մատուցվի երկու տեսակի բուտերբրոդներ, թխվածքաբլիթ (կեքս, գաթա), տաք թեյ, ըմպելու ջուր, զովացուցիչ ըմպելիքներ, մեկանգամյա օգտագործման գավաթներ:

2. Անձնակազմի սննդի մատուցումը պետք է իրականացվի ՀՀ կառավարության 03.12.2015թ. N1456 որոշմամբ հաստատված N 1 հիմնական ապահովման չափաքանակից ոչ պակաս և սննդամթերքի փոխարինման շրջանակներում:

3. Օրական անձնակազմին մատուցվող ճաշատեսակները, աղցանները և խավարտները պետք է լինի՝

նախաճաշին՝

- երկու տեսակից ոչ պակաս խավարտ, մշտապես պահպանելով բազմազանությունը,

ճաշին՝

- երկու տեսակից ոչ պակաս ապուր,
- երեք տեսակից ոչ պակաս խավարտ,
- երկու տեսակից ոչ պակաս աղցան,
- երկու տեսակից ոչ պակաս մսեղիք,

երեկոյան՝

- երկու տեսակից ոչ պակաս խավարտ, մշտապես պահպանելով բազմազանությունը,
- մեկ տեսակից ոչ պակաս ձուկ կամ միս, բացառությամբ սկումբրիա, սարդինելա, կարաս, հաստաճակատ տեսակներից:

Չափաքանակով նախատեսված մնացած սննդատեսակների մատուցումը պետք է իրականացվի շաբաթական սննդի բաշխման ցուցակով նախատեսված քանակների և օրվա կարգացուցակով նախատեսված սննդի մատուցման ժամերին:

4. Շաբաթվա յուրաքանչյուր ուրբաթ օրը ծառայություն մատուցող կազմակերպությունը պետք է կազմի հաջորդ շաբաթվա 7 օրերի համար սննդի բաշխման ձևաթերթիկը, այն համաձայնեցնի կենտրոնական հավաքակայանի բժշկական և պարենային ծառայությունների պետերի, նյութապահովման գծով տեղակալի հետ և ներկայացնի կենտրոնական հավաքակայանի հրամանատարի հաստատմանը: Բաշխման ձևաթերթիկում յուրաքանչյուր փոփոխություն պետք է կատարվի հավաքակայանի հրամանատարի թույլտվությամբ:

5. Յուրաքանչյուր օր, սննդի պատրաստման և մատուցման ծառայությունը պետք է իրականացվի կենտրոնական հավաքակայանի հրամանատարի կողմից նախորդ օրը հաստատված կաթսայական բավարարման դրված հրամանի մարդ/օրերի վերաբերյալ քաղվածքի հիման վրա:

6. Սննդի պատրաստման և մատուցման ծառայության պայմանագրի կնքումից անմիջապես հետո գործադրում առկա ջերմային, սառնարանային, մեխանիկական և ոչ մեխանիկական սարքավորումները, տեխնիկական միջոցները, ճաշարանախոհանոցային սպասքը և գույքը մինչև պայմանագրի գործողության ավարտը անհատույց տրամադրվում է ծառայություն իրականացնող կազմակերպությանը, կոմունալ վճարումները իրականացվում է պատվիրատուի կողմից, իսկ դրանց դիմաց ծառայություն մատուցողը ամեն օր լրացուցիչ հատկացնում է սեզոնային միրգ՝ յուրաքանչյուր օր մեկ զինծառայողի հաշվարկով 100 գրամից:

7. Ջերմային, սառնարանային, մեխանիկական և ոչ մեխանիկական սարքավորումների վերանորոգումը, սպասարկումը, ինչպես նաև ճաշարանախոհանոցային սպասքի և գույքի թարմացումը իրականացվում է ծառայություն մատուցող կազմակերպության կողմից:

8. Պայմանագրի գործողության ավարտից հետո ջերմային, սառնարանային, մեխանիկական և ոչ մեխանիկական սարքավորումները, ճաշարանախոհանոցային սպասքը և գույքը պատվիրատուին հանձնվում է սարքին վիճակում:

9. Ճաշարանը իր բոլոր արտադրամասերով, սննդամթերքի և բանջարեղենի պահեստները ծառայություն մատուցող կազմակերպությանը տրամադրվում է կոսմետիկ վերանորոգված վիճակում, սննդամթերքի պահպանումը և սննդի կազմակերպումն իրականացնելու համար: Նշված շինությունների շահագործման ընթացքում կոսմետիկ և ընթացիկ վերանորոգումը, անհրաժեշտության դեպքում պետք է իրականացվի ծառայություն մատուցողի կողմից:

10. Ճաշասեղանը և աթոռները տրամադրվում է ծառայություն իրականացնող կազմակերպությանը, դրանց ընթացիկ վերանորոգումը պետք է իրականացվի կազմակերպության կողմից, իսկ նորով փոխարինումը՝ պատվիրատուի կողմից:

11. Ճաշարանի, արտադրամասերի, սննդամթերքի և բանջարեղենի պահեստների սանիտարահիգիենիկ վիճակի պատասխանատվությունը կրում է ծառայություն իրականացնող կազմակերպությունը: Նշված աշխատանքներին կարող են ներգրավվել նաև կենտրոնական հավաքակայանի ճաշարանում հաստիքով նախատեսված խոհարարները և օժանդակ բանվորները: Ճաշարաններում սննդամթերքի և բանջարեղենի պահեստների սանիտարահիգիենիկ վիճակը, սննդի պատրաստումը, փոխադրումը և իրացումը կազմակերպել համաձայն <<Հանրային սննդի կազմակերպություններին ներկայացվող հիգիենիկ պահանջների (ՍԿ և ՀՆ 2·III·4.2 01 2003)>:

12. Սննդի պատրաստման և մատուցման ժամանակ ծառայություն իրականացնող կազմակերպությունը ապահովում է պատրաստման տեխնոլոգիայի գործընթացի, սննդամթերքի որակի, ռեժիմի, ընդունման, բաղադրատոմսերի պահպանման կանոնները և պատրաստի ճաշատեսակների ելքի նորմաները, ինչպես նաև մսի և ձկան չափաբաժինների համապատասխանությունը ՀՀ ՊՆ անձնակազմի սննդի կազմակերպման վերաբերյալ ՀՀ ՊՆ նորմատիվային և դեկավար փաստաթղթերով սահմանված նորմաներին կամ օրենքով սահմանված այլ նորմատիվային փաստաթղթերի:

13. Սննդի մատուցումը պետք է իրականացվի օրվա կարգացուցակով սահմանված սննդի ընդունման ժամերին:

[illegible] Հանձնաժողովներին հատկացվող պատրաստի ճաշատեսակների բաժանումը, ծառայություն իրականացնող [illegible] իրականացնում է ճաշասրահում, մթերքի բաշխման ցուցակում նշված պատրաստի չափաբաժինների նյութին [illegible] քանակությամբ: Իսկ բուտերբրոդների, թխվածքաբլիթի և ըմպելիքների հատկացումը ճանապարհին:

15. [illegible] սահմանված պայմանների խախտման դեպքում Պատվիրատուն սահմանում է թերությունների վերացման ժամկետ՝ 5 [illegible] օր: Նշված ժամանակահատվածում թերությունները չվերացնելու դեպքում Պատվիրատուն իրավունք ունի [illegible] լուծել պայմանագիրը:

16. Անձնակազմին հատկացվող սննդամթերքի համար սննդի պատրաստման և մատուցման ծառայություն իրականացնող կազմակերպությունը սննդամթերքի վերաբերյալ պետք է ունենա որակը հավաստող և անվտանգության վերաբերյալ համապատասխան փաստաթղթեր:

17. Յուրաքանչյուր օր կախված կերակրվող անձնակազմի թվաքանակից, սննդի պատրաստման և մատուցման ծառայությունը կարող է տատանվել 1-ից 400 մարդով:

Սննդի պատրաստման և մատուցման ծառայություն իրականացնող անձնակազմը ենթարկվում է պարտադիր և պարբերական բժշկական զննության, համաձայն ՀՀ կառավարության 27.03.2003թ. N347 Ն որոշման:

ՑԱՆԿ

տրամադրվելիք նյութական միջոցների

Հ/հ	Անվանումը	Չ/մ	Քանակը
1	Ափսե 1-ի ճաշատեսակի	հատ	540
2	Ափսե 2-րդ ճաշատեսակի	հատ	585
3	Պատառաքաղ չ/պ	հատ	450
4	Գդալ սեղանի չ/պ	հատ	620
5	Գդալ թեյի չ/պ	հատ	300
6	Դանակ սեղանի չ/պ	հատ	257
7	Շերեփ փոքր ալ	հատ	5
8	Շերեփ խոհարարի մեծ	հատ	2
9	Գավաթ պ /պ	հատ	450
10	Գավաթ ճենապակե	հատ	15
11	Սկուտեղ պ-պ	հատ	447
12	Ափսե փոքր կիսաճենապակյա	հատ	50
13	Դանակ խոհարարի եռյակ	հատ	3
14	Դանակ բանջարեղենի	հատ	4
15	Հացաման պ-պ	հատ	24
16	Փլավքամիչ ալ	հատ	1
17	Ջերմաչափ	հատ	1
18	Ջերմաչափ խոնավաչափ	հատ	1
19	Թեյնիկ ալ 3լ	հատ	5
20	Կաթսա լվանալու խոզանակ	հատ	3
21	Կաթսա 6լ ալյումինե առ. կափարիչի	հատ	5
22	Կաթսա 8լ ալյումինե առ. կափարիչի	հատ	5
23	Կաթսա ալ 4լ	հատ	6
24	Կաթսա 20լ ալ առ.կափարիչ	հատ	5
25	Կաթսա 10լ ալ առ.կափարիչ	հատ	3
26	Թաս պլաստմասե փոքրչ	հատ	3
27	Կաթսա ալ 40 լ	հատ	6
28	Կաթսայաչափ	հատ	2
29	Հացի տեփուր	հատ	20
30	Կշեռք էլ 500 կգ	հատ	1
31	Կշեռք էլ 600 կգ	հատ	1
32	Կշեռք էլ 32 կգ	հատ	2
33	Վաննա 2 սեկցիա չ/պ	հատ	2
34	Վաննա 2 սեկցիա չ/պ մեծ	հատ	1
35	Վաննա 1 սեկցիա չ/պ	հատ	1
36	Վաննա կենցաղային էմալե	հատ	1
37	Կացին	հատ	1
38	Մթերաթափոնների բաք ցինկապատ	հատ	6
39	Դարսակ խոհանոցային գույքի չ/պ	հատ	1
40	Դարսակ ճաշարանի սպասքի չ/պ	հատ	3
41	Միս կախելու կանգնակ չ/պ	հատ	1
42	Միս հանելու պատառաքաղ	հատ	1
43	Սայլակ մատուցողի	հատ	2
44	Սեղան արտադրական չ/պ	հատ	1
45	Հաց կտրիչի տեղադրման սեղան	հատ	1
46	Հաց կտրող մեքենա	հատ	1
47	Բանջարեղեն կտրող մեքենա	հատ	1
48	Կարտոֆիլ մաքրող մեքենա	հատ	1
49	Ջերմապահ ՏՆ 36	հատ	6

50	Սառնարան խցիկ	հատ	2
51	Սառնարան բունկեռ	հատ	2
52	Սառնարան խցիկ 1.5 տ	հատ	1
53	Սառնարան պահարան 560լ	հատ	2
54	Էլ. կաթսա ԿՊԷ-160լ	հատ	1
55	Էլ. կաթսա ԿՊԷ-250լ	հատ	1
56	Էլ սալօջախ 4 սալիկանի	հատ	1
57	Էլ թավա	հատ	1
58	Ղարսակ հացի պահպանման	հատ	2
59	Տակդիր վանայի	հատ	1
60	Ինքնասպասարկման հոսքագիծ	հատ	1
61	Դիտակտիկ նյութեր	հատ	1
62	Սալաթաման պ-ա փոքր	հատ	400
63	Կոմբինացված աղաման պոպեղաման պ-պ	հատ	50
64	Հոսանքի լարվածության կարգավորիչ	հատ	1

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Գնման առարկան	Չ/մ	Քանակը	1 անձի համար նախատեսված մթերքի արժեքը /ՀՀ դրամ/	Գնման ժամանակացույց
1	սննդի պատրաստման ծառայություն, այդ թվում՝	դրամ	1		
	Կենտրոնական հավաքակայանում անձնակազմի սննդի պատրաստման ծառայություն	մարդ/օր	Յուրաքանչյուր օր. սննդի պատրաստման և մատուցման ծառայությունը պետք է իրականացվի կենտրոնական հավաքակայանի հրամանատարի կողմից նախորդ օրը հաստատված կաթսայական բավարարման դրված հրամանի մարդ/օրերի վերաբերյալ քաղվածքի հիման վրա (ըստ հայտերի):	2000	Ծառայությունների մատուցումը կիրականացվի 2019թ. համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ կողմերի միջև կնքվող համաձայնագրով սահմանված ժամկետում:

Նշում՝
Մատուցվող ծառայության վայրը՝ ք. Երևան, Արտաշեսյան 99 հասցեում:
Առավելագույն գումարը 40000000 ՀՀ դրամ:
Մեկ օրվա գնի 30%-ը կազմում է նախաճաշ, 45%-ը ճաշ, 25%-ը ընթրիք, իսկ ճանապարհին հատկացվող բուտերբրոդների, թեյի և զովացուցիչ ըմպելիքների համար մեկ օրվա գնի 55%-ը:

Հավելված N 2
N ԳՀԾՁԲ-7/1-1 պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Հ/հ	Միասնական անվանացանկի ԸՊՎ կոդը	Գնման առարկան	Նախատեսվում է ֆինանսավորել պայմանագրի կատարման համար համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ լրացուցիչ կնքվելիք համաձայնագրերով սահմանված վճարման ժամանակացույցով:
1	55321100/527/10/1	սննդի պատրաստման ծառայություն /Կենտրոնական հավաքակայանում անձնակազմի սննդի պատրաստման ծառայություն/	

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ

«Լարս» ՍՊԸ
տնօրեն

Ա. ՊՐԱՉՅԱՆ

Հավելված N 3
N ԳՀԾՁԲ-7/1-1 պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ _____
հվհհ _____	հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

» « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		Կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը ըստ կնքված ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 3.1
N ԳՀԾՁԲ-7/1-1 պայմանագրի

ԱԿՏ N ___
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անվանումը Կատարողի անվանումը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____-ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն